

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի ապրիլի 25-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 277-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Սույն օրենսգրքում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի չափեր են համարվում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի համաձայն, Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերի նվազագույն շեմի հնգապատիկից մինչև քսանհինգապատիկը ներառող չափերը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-7.4-րդ մասերով.

«7.1. Սույն օրենսգրքում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի խոշոր չափեր են համարվում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի համաձայն, Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերի նվազագույն շեմի քսանհինգապատիկից մինչև հարյուրքսանհինգապատիկը ներառող չափերը:

7.2. Սույն օրենսգրքում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի առանձնապես խոշոր չափեր են համարվում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի համաձայն, Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերի նվազագույն շեմի հարյուրքսանհինգապատիկը գերազանցող չափերը:

7.3. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 7-րդ, 7.1-ին և 7.2-րդ մասերով սահմանված չափորոշիչները:

7.4. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:».

3) 9-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 284-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 284. Երջանատությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը».

2) 1-ին մասի «Մշակումն արգելված թմրանյութեր» բառերը փոխարինել «Երջանատությունն արգելված թմրամիջոցներ» բառերով և «ապօրինի» բառը հանել.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Երջանատությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 286-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 6-րդ և 7-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն օրենսգրքում նշված թունավոր նյութերի ցանկը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

7. Սույն օրենսգրքում նշված խիստ ներգործող նյութերի ցանկը, ինչպես նաև դրանց խոշոր չափերը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 4. Օրենսգրքի NN 1-5 հավելվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է 2018 թվականի հունիսի 27-ին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	<p align="center">Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</p>
	<p>2017 թվականի դեկտեմբերի 6-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, որոնք սահմանեցին թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերը որոշելու չափորոշիչները, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերի հասկացությունը, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերը, շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց չափերը, պրեկուրսորների չափերը սահմանելու՝ ՀՀ կառավարության լիազորությունը: Այսինքն, նոր մոտեցում է ցուցաբերվել թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերը որոշելու հարցում: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 44.1-ին հոդվածի համաձայն՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափեր են համարվում անսովոր գործածողի, այսինքն՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), ինչպես նաև խիստ ներգործող նյութեր չգործածող, 18 տարին լրացած և գործնականում առողջ անձի օրգանիզմի վրա հոգեներգործուն ազդեցություն թողնելու համար բավարար թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի նվազագույն չափերից մինչև դրանց հնգապատիկը ներառող չափերը:</p> <p>Հաշվի առնելով, որ տվյալ բնագավառում ԱՀ և ՀՀ օրենսդրական դաշտերը միատեսակ են, անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում:</p>
2.	<p align="center">Առաջարկվող կարգավորման բնույթը</p>
	<p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի նախագծի համաձայն՝ զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափեր են համարվում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերի նվազագույն շեմի համապատասխանաբար 5-ապատիկից մինչև 25-ապատիկը ներառող, 25-ապատիկից մինչև 125-ապատիկը ներառող և 125-ապատիկը գերազանցող չափերը:</p> <p>Բացի այդ, նախագծով ԼՂՀ քրեական օրենսգրքի 284-րդ հոդվածի վերնագրից և տեքստից հանվել է «ապօրինի» բառը, ինչպես նաև նույն հոդվածի վերնագրում և տեքստում «Մշակույն արգելված» բառերը փոխարինվել են «Շրջանառությունն արգելված» բառերով:</p>

	<p>ԼՂՀ քրեական օրենսգրքի 284-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում թմրամիջոցներ և այլ նյութեր պարունակող բույսեր ապօրինի՝ այլ կերպ ասած, նորմատիվ իրավական ակտով սահմանված պահանջների խախտմամբ, ցանելու կամ աճեցնելու համար, սակայն համապատասխան գործողությունների իրականացման կարգ չի սահմանում՝ թողնելով դա այլ իրավական ակտերի կարգավորմանը: Մինչդեռ թմրամիջոցների շրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդրորեն կարգավորված չէ համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու կարգը: Այսպիսով, առկա է օրենսդրական բաց այն առումով, որ սահմանված չէ ԼՂՀ քրեական օրենսգրքի 284-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների իրականացման կարգը, ինչը և հանգեցրել է նշված հոդվածով իրականացվող քրեական հետապնդումների դադարեցումների: «Ապօրինի» բառը հանելուց հետո կարող է ստեղծվել կարծիք, որ բժշկական նպատակներով նույնպես կարգելվի թմրամիջոցներ և այլ նյութեր պարունակող բույսեր աճեցնելը կամ ցանելը: Հարկ է նշել, սակայն, որ «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ նոր թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մշակումն հանձնարարվում է գիտահետազոտական կազմակերպություններին, իսկ մշակում հասկացությունը, ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն, իր մեջ չի ընդգրկում թմրամիջոցներ ցանելը և աճեցնելը:</p>
	<p align="center">Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</p>
	<p>Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:</p>
<p>4.</p>	<p align="center">Ակնկալվող արդյունքը</p>
	<p>Օրինագծերի ընդունմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքում կսահմանվեն թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերը որոշելու չափորոշիչները, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերը, շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց չափերը, պրեկուրսորների չափերը սահմանելու՝ ԱՀ կառավարության լիազորությունը:</p>